

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և ածն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լրագրով.

Յայտարարութիւններ համար վճարում են

խաւաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կովկասեան ցուցահանդէս.— Ներքին Տե-
ստութիւն. Մամուլ. Նամակ Կարսից. Նամակ
Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ձինական գործերը. Առտաքին լուրեր.— ՀՆՈՒ-
ԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Հայկական սպազորութիւն:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

Մենք հաղորդեցինք, որ երկրագործու-
թեան միջնորդութիւնը, համաձայնու-
թիւն կայացնելով կովկասեան կառավար-
չապետի հետ, թողարկել է կովկասեան
գրեգորիանական ընկերութեանը երկու
1901 թվականին կազմել կովկասեան
ցուցահանդէս Թիֆլիսում: Ցուցահան-
դէսը պէտք է պարունակէ իր մէջ Կով-
կասի արդիւնաւորութեան զանազանա-
տեսակ առարկաները, թէ գիւղատնտե-
սական, թէ արհեստագործական, թէ գոր-
ծարանական և թէ գիտական:

Կովկասեան ցուցահանդէսը պէտք է
բացվի կովկասեան գիւղատնտեսական ըն-
կերութեան գործութեան յիսնամեայ
յօբելէանի և ուսաց զօրքերի Վրաս-
տան դաւու հարիւրամեայ յօբելէա-
նի յիշատակին: Ընկերութիւնը նպատակ
է դրել այդ ցուցահանդէսով պարզել, թէ
ինչ վիճակի մէջ է կովկասեան արդիւնա-
ւորութիւնը քսաներորդ դարի շէմքում,
թէ ինչ կարիքներ ունի նա ներկայումս
և ինչ առաջադիմութիւններ է արել ան-
ցաւի վերաբերութեամբ: Ընկերութիւնը
գիտատնտեսական ունի ցուցահանդէսի ժա-
մանակ հրաւիրել արդիւնաւորութեան ժա-
նով և նրա քննութեան ենթարկել ընթա-
ցիկ կարեւոր տնտեսական և կրթական
խնդիրները:

Եթէ ընկերութեանը աջակցի իր ցուցա-
հանդէսը լիակատար և ուսանելի անելու
և ժողովի պարագմունքներին պատշաճա-

ւոր լրջութիւն և հիմնաւորութիւն ըն-
ծախելու, նա զգալի կերպով առաջ կը մղէ
մեր երկրի հերթական հարցերից մի քա-
նիսը, որոնց պակասում են ներկայումս
հեղինակութիւն և պատճառաբանման ու-
սումնասիրութիւն:

Սակայն ցուցահանդէսը կազմելու հա-
մար պահանջվում են ոչ միայն մտաւոր
և բարոյական ջանքեր, այլ և նիւթական
խոշոր միջոցներ: Ցուցահանդէսը կը պա-
հանջէ մինչև 80 հազար ռուբլի գումար
ծախել, որի կէսը կարելի է հայթայթել
ցուցահանդէսի եկամուտներից, իսկ միւսը
պէտք է հոգան զանազան հիմնարկու-
թիւններ՝ թէ պետական և թէ հաս-
րակական ու մասնաւոր: Որքան մեղ յայտ-
նի է, կովկասեան գիւղատնտեսական ընկե-
րութիւնը մտադիր է հրաւիրել գործակցու-
թեան և մասնակցութեան համար քաղա-
քային ինքնավարութիւնները, գիտական
և բարեգործական հիմնարկութիւնները,
բանկային հաստատութիւնները, մասնաւոր
խոշոր ձեռնարկութիւնների վարչութիւն-
ները՝ միասին մշակելու ցուցահանդէսի
ծրագիրը և գործունէութեան նախագիծը:

Այլի առաջ ունենալով, որ ցուցահան-
դէսը էական նշանակութիւն ունի թէ
ամբողջ Կովկասի և թէ մասնաւորապէս
Թիֆլիսի համար, որ նա մի տեսակ թէ
հայացանքութեան և թէ տնտեսութեան
հանդէս պէտք է լինի երկու նշանաւոր
դարաշրջանների մէջ, որ նա կապված է
մեր երկրի քաղաքացիական կեանքի որոշ
շրջանների հետ, կարելի է յուսալ, որ
մեր երկրի թէ հիմնարկութիւնները և թէ
մասնաւոր անձինք առանձին համակրու-
թեամբ կը վերաբերվեն այդ ընդհանուր
կովկասեան գործին և կը նպաստեն, որ
կովկասեան ցուցահանդէսը իրօք լինի լիա-
կատար, արդող կազմակերպված և իր հե-
տեանքներով արդիւնաւետ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մեր մէջ օգտակար մտքերի և ծրագրերի
պակասութիւնը չը կայ. մեր պակասութիւնը
հէնց այն է, որ օգտակար մտքերն ու ծրագրե-
րները չենք կարողանում կամ աւելորդ ենք հա-
մարում իրականացնել, խօսքից դուրս դնել:
Ծուռով կարծէք տաան տարեկան երեխաներն
էլ մեր մէջ կը սկսեն հասկանալ, որ, օրինակ,
նոյ նախապետի արքայազն էլ գործածող
ժողովուրդը աղքատ ու թշուառ պիտի մնայ:
Այսքան ժողովրդականացել է կանոնաւոր ու
կատարելագործված գիւղատնտեսութեան կա-
րեւորութիւնը մեզմասն, բայց և այդպէս,
քանի տեղերում հայ գիւղացին թողել է նոյ
նախապետի գործիքը և եւրոպական գութան-
ներով է վար անում: Նոյն իսկ Կ. Պոլսի հայոց
մասնով, չը նայած որ դեռ Բոսֆորի բոլորով
արեւելք մարդկանց ձեռքում է գտնվում և
անպիսի զուարճութիւն է դուրս հոգեւորա-
կանների փիլիսոփայութիւնը և փարաւաններով զբաղ-
վելու մէջ, նոյն իսկ այդ մասնով, ասում ենք,
որ օրի վրա գտնու է, որ ժողովրդի բարեկե-
ցութիւնը, հարստութիւնը, ոյժը գիւղի մէջ է,
որ գիւղը պէտք է բարեկարգել, գիւղին պէտք
է շունչ ստալ: «Սուրհանդակ» լրագիրը մի շատ
խելացի հարց է արժանանում: Ինչպէս տարա-
ծել գիւղատնտեսական գիտութիւնները գաւա-
ռացի ժողովրդի մէջ: Պէտք են, ի հարկէ, դպ-
րոցներ, ժողովրդական գրքեր, որոնց մէջ գիւ-
ղատնտեսական կարեւոր խրատներ լինեն: Յօ-
գուածագիրը խորհուրդ է տալիս գիւղատն-
տեսական կրթութեան համար օգտվել որբա-
նոցներից, որոնք թիւը Թիւրքաց հայաստա-
նում արդէն 40-ի է հասնում:

Գիւղատնտեսական վարժարաններու վե-
րածուելը հաստատութիւնները արդէն հիմ-
նուած են: Մեր օրընդոցներն են անոնք, ո-
րոնցմէ յատկապէս հաստատուած ըլլալով վա-
րժ մը մէջ, ազգային մը կենդանի, այնքան
յարմարութիւններ ունին, որոնց նման շատ
գիտար է ձեռք բերել ժողովրդային նոր
հանգանակութեամբ: Ասոնց մէջ աւանդուած

ուսանց և արհեստներու ներկայ ծրագիրը
պատասխաններու տեղական հանգաման-
քներուն անյարմար է: Այս, տոնային կըր-
թութիւն մը կը տրուի, այդ շատ հարկաւոր
բան է, բայց ատիկա բաւական չէ որքան
փորը կշտացնելու: Այսօր որքան ազգին
բարեկրթութեան, գիւղացին զարգացման
համար խորհող և խօսողներու ուղղակի տրա-
մադրութեան ներքեւ ինկան: Անոնք ամբողջ
ազգին զաւակներ դարձան, բայց խորին ցա-
ւով կը տեսնուի, որ իւրաքանչիւր ծնողի
անհատաբար գործած սխալը, ազգին պաշ-
տոնական մարմինները հաւաքաբար կը գոր-
ծեն, գիւղացին զաւակ կը միջավայրին
հիմնապէս անյարմար զբաղումներու կառու-
նորդն և պատճառ կըլլան անոր ապագայի
մէջ գիւղը լքանելու:

Որքանոցներում սովորաբար աւանդվում են
և արհեստներ—տեղեւորութիւն, դերձակութիւն
և կոշիկակարութիւն: Բայց այդ արհեստները
արդէն պարտաւորեցնում են որքանին, իրանց
ապաստարաններից դուրս գալուց յետոյ, բնա-
կութիւն հաստատել քաղաքներում, որովհետեւ
գիւղը նրանց սովորած արհեստի պահանջը
չունի:

Որպէս զի գիւղացին զաւակը իրեն պէտք
եղած ուսումը առնէ, 40 հատի մօտեցող մեր
օրընդոցներէն յարմարագոյնները առանց յա-
պաղման գիւղատնտեսական տարրական նա-
խակրթարաններու վերածելու է տեղական
միջոցներով: Ապահով թող ըլլան վաճառքի
վարիչ մարմինները, որ նպաստաւոր գետնի
վրայ զոյգ մը ձի, նոր մեքենաներով և քա-
մի մը գիւղացին նոր գործիքներով, տարե-
կան 50 ոսկի գումար հասնող մը կրնան գո-
յացնել մեր ամեն մէկ վաճառքի համար, և
եթէ վաճառքը Մարգարանի և Գաղաթիոյ
պէս բանակ տեղեր ըլլան, այս գումարը
գրեթէ կը կրնապատկուի: Հիմա ուրիշ մե-
զի պակասած դարձող չէ, քանզի ունենք 40
հատ, որոնցմէ մեր նախապիւնները կրնանք
ընտրել: Դիւրագին գործիքներու համար
հարկ եղած նախնական ծախքն այլ չէ, քան
զի ձգենք ուրիշ բաները, մեր շատ վաճառ-
բուն մէջ գտնված աւելորդ պահանջներու
արժէքն միայն կրնայ հարկ եղած 50—100
նոյն իսկ 200 ոսկի ծախքը դուրս: Մեզի
պակասած գիւղատնտեսութեան պէտքը զգա-
ցող հոգաբարձութիւններ, վարիչ մարմին-
ներ են:

Այս ճանապարհ տեսնալը և հայեալը ի ալ
կողմն և անհակն, և ամենայն կողմն, ամե-
նայն քաղի քով և ամենայն քովի քով երե-
խայք լալիս, մէկն չկայ, որ գիւղացիներ
գիտաստ:

Կոտորվելով ու հալածվելով, գաղթականները
գիւղացին գէպի իրանց համար նշանակված տե-
ղերը Պարսկաստանի գանազան կողմերում,
ուր նրանց սպասում էին անձամբ իրենի և
անսովոր կրիմայի սպանիչ հանգամանքները,
կեղեքումներ, հարածանքներ, գոտով խաղա-
ցում և այլն: Իսկ ինչ մնաց այն երկրում, որ-
տեղից հանվել էին այդ մարդկային հօտերը:
Հետեւեալ տարին թիւրք-պարսկական պա-
տերազմների բնւ գործաւ վասպուրականը
Սինան փաշան, պարսկութիւն կրելով պարսիկ-
ներից, սկսեց զօրաժողով անել և մի հազարին
բանակ կազմեց, որ կատարեալապէս ուսնակիս
արաւ ազգաբնակչութիւնը: Թաւրիզի մօտ Շահ-
Աբաք մեծ ջարդ տուեց թիւրքերին, որոնցից
այնքան վախենում էր անյեալ տարի: Ամին
տեղ տիրեց խաղաղութիւն, անտէրութիւն:
Ձէլալի աւագանները աւելի ևս յանդուգն ու
կատաղի դարձան և նրանց հազարն հրօտակ-
ները սրբում, տանում էին այն, ինչ մնացել էր
Շահ-Աբաքի արշաւանքից յետոյ: Բարբարոսու-
թեան հետ դաշնակից են և բնութեան ար-
հաւիրքները երկրորդ մշակող չէր մնացել, գիւ-
ղացու անտեսութիւնը արմատից ոչնչացրված
էր, և սկսվեց համատարած սով, որ տեւեց
երկու տարի: Փոքր-Ասիայի սահմաններից մին-
չեւ Կասպից ծովը մի կողմ ուստիք չէր ձար-
վում: Աւագանների ահից դադարել էր երկր-
ւեկութիւնը, ոչ մի տեղից օգնութիւն ուսա-
նալ չէր կարելի: Մարդիկ հասան դժբախտու-
թեան և գաղատնութեան ծայրագոյն աստիճան-
ներին: Նրանք ուսում էին միմեանց, ծնողնե-
րը իրանց երեխաների մասով էին կշտանում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

II

Աշուն էր: Արարատեան դաշտում կուտված
են բերքաւոր ընտանիքներ: Մարդկային այդ
հօտերը գրաւել են մի տարածութիւն, որի
լայնութիւնը Գանձի լեռների ստորոտից մին-
չեւ Արաքս գետն է, իսկ երկարութիւնը—մի
օրվայ ճանապարհ: Սինան փաշան հասել է
Կարս, Շահ-Աբաքը չտալով վերցնում է Ագ-
լակալէի պաշարումը և սկսում է նահանջը:
Երեք բանակ են շարժվում դէպի հարաւ-ա-
րեւելք, առջեւից գնում էր գերիների բանակը,
յետոյ նրան քաղ պարսից բանակը, իսկ արան
հետեւում էր Սինան փաշան: Ջուղան էլ հրա-
ման ստալու գաղթելու միւսների հետ Շահ-
Աբաք մեղք համարեց թողնել այդ ժիւր ու ձար-
վել վաճառականներին Հայաստանի հողի վրա:
Մինչդեռ ջուղացիները չեղ կերպով հիւ-
րապետում էին թագաւորին, հարկաւոր ընծաներ
էին մատուցանում, Շահ-Աբաքը, որ Պարս-
կաստանի աշխարհալէն բռնաւորներից մէկն
էր և ամենանշանաւորը վերջին դարերի ըն-
թացքում, վճնեց տանել նրանց իր երկրը, որ-
պէս զի այնտեղ ծաղիկ առեւտուրը: Եւ առ-
հասարակ այդ ամբողջ գերեւարութիւնը, բացի
երկրը անապատ դարձնելու գլխաւոր նպա-
տակից, ունէր և տնտեսական մեծ նշանակու-
թիւն Պարսկաստանի համար: Հաշիւը պարզ էր.
մեծ քանակութեամբ մի աշխատատեղ, հիւր,
ոչխարի պէս վախկոտ ժողովուրդ էր մանում
այնտեղ մշակելու, արդիւնաբերելու, տէրերին
վաճառելու համար: Ո՛վ կը հրաժարվէր այդպի-
սի բարեբեք:

Ջուղան էլ լացով ու կոծով դատարկվեց:
Բայց ինչ էր նրա լացն էլ, կոծն էլ այն ընդ-
հանուր տեսարանի մէջ, որ բացվեց Արաքսի
ափերին: Սինան փաշան անդադար առաւա-
նում էր, բազմապատկելով պարսիկների երկու-
ղը: Պէտք էր հապճեպով առաջ քշել մարդ-
կային նախերը, Արաքսից անցկացնել, որպէս
զի օսմանցիները յետ չը լսէին: Բայց փոխադ-
րութեան միջոցներ չը կային. եղած նաւակ-
ներն ու լաստերը զոտ քիչ էին: Բարբարոսու-
թիւնը, սակայն, գործ չունի բանակաւորութեան,
հանգամանքների հետ. նրա համար ամենա-
բարձր խնայողութիւնը, հրաշագործ ոյժը բոլ-
նութիւնն է: Եւ ետեւից արշաւող թշնամու-
վերաբերմամբ աղուէի գիրք բռնած պարսիկ-
ները առիծ են դառնում բուծ ու ուշակորոյս
ամբողջի մէջ, Հրամայում են քիչ գերիներին
դէպի գետի մէջը, ժամանակ չը կայ, սպասել
կանգնել անհնարին է. թող, ուրիշն, բազմու-
թիւնը թափվէ գետը, անցնէ միւս ափը ինչ-
պէս կարող է: Ծեծում են, ջարդում են այն
մարդկանց, որոնք յանդուգնում են վախենալ գե-
տից, գլուխ, ականջ ու քիթ են կտրում, շաա-
պեցնում են: Եւ սարսափահար բազմութիւնը,
մրրիկից բռնված ոչնչարային հօտերի պէս,
թափվում է ջրի մէջ: Հառաչանքներն ու աղա-
ղակները լցրել են Արաքսի ամբողջ ձորը: Մի
նոր Արաքս էր գոյացել այդ անբախտների ար-
տասունքներից: Առջեւում անհուն գետը, և
նապարհների վրա, հիւսնայները անհնամ միւս-
նում էին: Յետ մնացողներին պարսիկներն
էին սպանում: Աղէտին ախանառես և մաա-
նակից մէջ *) գրում է. «Երեւոյնքան որ իջ-
նէաք, ի վաղն երեւաք բազում մեռեալք մնա-
լին իշկաւորն և բազում հիւանդք. մարդի օ-
ժանդակութիւն չկայր, որ թաղէր միւսեալքն:»
) Ազգայնական Բաշկերի, ա. Շաշկարը մատենագր-
հայ. Գ. Պատկանանի:

Հարկ չը կայ այստեղ մանրամասն բացատրելու, թէ որքան առողջ ու օգտակար են յօդուածագրի այս մտքերը: Պատրաստել հայ որբերից զարգացած, հասկացող երկրագործներ, որպէս զի նրանք նստեն իրանց գծադր ծնողներն արեւնով ոռոգված հողի վրա, մշակեն նրան, հանեն այդտեղից իրանց ապագայ բաղդին ու երջանկութիւնը—սա մի այնպիսի միտք է, որը կարելի է միայն ողջունել: Մինչեւ այժմ թիւրքահայը ձգտել է լինել բարձր երգող բանաստեղծ, կոսմոպոլիտ վաճառական, թափառաշրջիկ մշակ եւ արհեստաւոր: Հողի, իրականութեան, ժողովրդական ոգու հետ շատ քիչ աւանդութիւն ունեցող այս ձգտումներն անդ թող այսուհետեւ տիրէ լուրջ աշխատութեան, հողի մարդու գաղափարը: Ահա մի անմշակ, բայց շատ աղքատ, շատ բարերար ասպարէզ թիւրքահայ մտածող դասի համար: Բայց կենդանի գործ չը կայ: Եւ մինչեւ երբ պիտի այսպէս մնանք:

*

Ներկայ րօպէին ամենքին հետաքրքրում է այն հարցը, թէ ինչ դերք կը ընէ Ռուսաստանը Չինաստանի վերաբերմամբ: Դրութիւնը այսպէս է բնորոշում «Руссия Вѣд.» լրագիրը: Չինաստանում սկսվում են խռովութիւններ, որոնք առաջ են բերում պետութիւնների միջառնութիւն: Դրան պատասխանում է Չինաստանը մարտակոչ ուղարկելով Եւրոպայի եւ ամենից առաջ իր ամենամօտիկ հարևան Ռուսաստանին, որի սահմանների վրա էլ հաւաքվում են նրա զորքերը: Թէեւ ոչ զիպոսմատիայի ընդունած կանոններով, բայց եւ այնպէս միանգամայն իրական եւ համոզիկ կերպով չինացիները պատերազմական գործողութիւններ են սկսել Ռուսաստանի դէմ, ոչնչացնելով Մանջուրիայի երկաթուղին, որ չիլովում է ուսուցող գրամով, համաձայն չինաց կառավարութեան հետ կապած դաշնագրի, նոյնպէս եւ յարձակվելով Ամուր գետի վրա երթնելով ուսուցող շողեւանների դէմ եւ ուղղակիորէ Ռուս-գոլէշենի քաղաքը:

Լրագիրը չինական ներկայ դէպքերի ընդհանուր ուղղութիւնից հետեւեցնում է այն, որ Չինաստանը այժմ ջանքեր է գործ դնում ազատելու իր հիւսիսային մասը եւրոպական եւ ամենից առաջ Ռուսաստանի ու Գերմանիայի ազդեցութիւնների օգակից: Բայց Գերմանիան Չինաստանում միայն առեւտրական շահեր ունի եւ նրա զբաղած կիս-Չաուն առ այժմ մեծ կարեւորութիւն չէ ներկայացնում: Բնական Ռուսաստանը Չինաստանին սահմանակից է հազարաւոր վերստեր տարածութեան վրա եւ հարեւորաբար միլիոններ է ծախսել այդ կողմերում զանազան չինութիւններ եւ երկաթուղի կառուցանելու համար: Ուրեմն ամենից շատ Ռուսաստանն է չինական գործերի մէջ չափ ունեցողը: Լրագիրը չէ աս-

Դիակների բազմութիւնը հաւաքում էր դայերի մեծ խմբեր, որոնք մտնում էին գիւղերն ու տները, յափշտակում էին նոյն իսկ կենդանի երեխաներին:

Զարմանք չէ, որ կործանման ծայրին հասած երկրի աւելի եւս դատարկվէր: Բնակիչները, այդքան ցաւերից ու աղէտներից չզրկված, սկսեցին փախչել: Նոր հայ գաղթականութիւններ գնացին դէպի Դրիմ, Լեհաստան, Մօլդաւիա, դէպի ամեն կողմ: Եւ մնացած դատարկութեան ու յուսահատութեան մէջ թագաւորում էր կղերի զգուշիկ քարասրտութիւնը: Մինչդեռ չորսը քար քարի վրա չէր մնում եւ հայ ժողովուրդը, կարծես, իր վերջին շունչն էր փչում, Դաւիթն ու Մելիքէթը խայտառակ վէճեր էին մղում միմեանց դէմ, թէ ով պիտի կաթողիկոս մնայ: Բաւական չէր, որ Մելիքէթն էր Դաւիթի հաճութեամբ գնացել էր Շահ-Աբասին զրկելու ու մասնութիւններ անելու, այժմ այդ երկուսը, իրանց արածի փոխարէն ոչինչ վարձատրութիւն չը ստանալով պարսիկներէր, աշխատում էին գոնէ միահիման իշխանութիւնը մնալ հայերի վրա եւ ապրել փառաւոր կերպով: Յաղթողը վերջը Մելիքէթն էր, որ պարսից կառավարութիւնից կապալով վերցրեց հողերը իշխանութիւնն ու սկսեց աջ ու ձախ կեղծել, հարստահարել ժողովուրդը, որպէս զի նրանցից կողմադրած իր ու սիրելիների հետ ինքն էլ իր ազդակներով ու սիրելիների հետ Երեւանում փափուկ ու առատ ապրուստ ունենայ: Դա մի վեղարաւոր խան էր, չըլծում էր պարսիկ ձիաւորներով չըլծապալած, հրամայում էր, աւանում, տանջանքներ էր ենթարկում ընդդէմացողներին, իսկ աւելի զօրաւոր հակառակորդներին ոչնչացնում էր մասնութիւններով:

Հայոց փառամոլ եւ սրբալիքաւոր կաթողիկոսների շաքիւն ապ մարդը ամենապատկեր-

տու, որ չինացիների կողմից սկսած թշնամական գործողութիւններն Ռուսաստանը պիտի պատմութիւնէ, պաշտօնապէս պատերազմ յայտարարելով Չինաստանի դէմ: Նա ցանկալի է համարում, որ Ռուսաստանի ամեն կողմերից մեծ քանակութեամբ զօրքեր տանվին չինական ներք պաշտպանելու համար, այսինքն յարձակողական պատերազմի տեղ պաշտպանողական գործողութիւնների ձեռնարկել: Այսպէս է արա-մարդկային ուսուցող մասնուի մեծ մասը: Այսպէս է, ինչպէս երեւում է, նախում գործերի վրա եւ ուսուցող կառավարութիւնը: Հետազոտողներից յայտնի է, որ արդէն հրամայված է շարժում չինութեան մէջ դնել Սիբիրի եւ Միջին-Ասիայի ուսուցող զօրքերը: Եւ թուում է, որ ամեն ինչ կախված կը լինի գործողութիւնների այն կշռանակից, որին կը հետեւէ Չինաստանը այսուհետեւ:

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Կառավարութիւնը վրանդիւր բաժանել կրկնապարծիք վնասված գիւղերին՝ մի առմամբ նախ քան զայն ապրելու, մինչեւ աների հարցը կարգադրվի եւ չինութիւնները կառուցվին: Ի հարկէ, այժմ այդ միջոցը ներկայացնում է որոշ յարմարութիւններ, բայց պէտք է աչքի առաջ ունենալ, որ Կարսն այնպիսի տեղ է, որ կարելի չէ, որ երկար ժամանակ կարելի լինի վրանդիւրում ապրել, մասնաւորապէս Աղազավա կոչված լեռան շրջակայքում, որպիսի կարելի է, պէտք է աշխատել տներն հարցը չուտով կարգադրել, որովհետեւ ամենաշատը երեք անգից յետոյ՝ այլ եւս հնարաւորութիւն չի լինի վրանդիւրում ապրելու եւ այդ բանի հետեւանքը կարող է աւելի աղետալի լինել իր առաջացած հիւանդութիւններով, ինչը երկրաշարժն էր:

Գուցէ գործի տեսակէտից աւելի օգտակար լինի, եթէ կառավարութիւնը քաղաքներից էլ մարդիկ հրաւիրէ իր կազմած մասնագիտովի հետ աշխատելու եւ սրանց զեկալարութեամբ էլ վնասված գիւղերում մասնագիտովի կազմէ՝ գործի եւ չինութիւնների վրա անմիջապէս հսկելու համար: Դարաքրիսեցի մի յոյսի պատմելով, երկաշարժից յետոյ Աղազավա գիւղի եւ իրանց գիւղի մէջ յայտնվել են ստորերկրեայ ջրեր, որոնք թէեւ առաջնորդում էլ երբեմն երբեմն զուրա ըլլելով են, ինչ լինում, բայց ոչ այնպէս պղտոր եւ մութ, էնչպէս այժմ է:

Հողերու իշխանութեան կարգադրութեամբ, Յակովբ քահանայ Կիրակոսեան հեռացրած է կառավարութեան անդամութիւնից, փողերը վաճակելու պատճառով եւ նրա փոխարէն նշանակվել է Խորէն քահանայ Ստանիսլայեան:

Այսպէս է ներկայացնում: Իմանալով միայն թալանել, նա թշնամի էր ամեն մի բարեկարգութեան եւ եկամտանքի աղբիւր էր դարձրել տղէտ եւ անբարոյական մարդկանց կաշառքներով ձեռնադրել: Եկեղեցիները կատարելապէս ամայն ու մերկ էին մնացել, որովհետեւ առաջնորդները կողոպտել էին նրանց՝ իշխող մահմեդականներին կաշառելու համար: Եթեմիսինը մի քարոքանք ու անտէր վանք էր, մի հատ գիւղ էր մնացել, որովհետեւ գիւղը կարգադրող չը կար, մի հատ եկեղեցական դարձ էր անօթ չը կար, որովհետեւ ամեն դարձ, որ փողեր չը շատ էին, վաճառված էր կամ գրաւ գրված: Բաւական է սակ, որ նոյն իսկ անբար, բուրվառները, սկիհները, խաչերը գտնվում էին մահմեդական իշխողների տնակում: Նոյն իսկ ճրագ էլ չէր վաճառվում էթմիսինի տաճարի մէջ: Մի մահմեդական մարդ երբեմն, երբ ճանապարհորդ կամ պատահական այցելու էր լինում, վառում էր ձէթի ճրագ, զննում էր հողից ամենազրկաւոր վանքի մերկ բնակիչները եւ փոխարէնը ոգորմութիւն էր ստանում: Վանքում մնացել էին մի քանի տղէտ սեւազուլներ, որոնք վար անել էին տալիս եւ տարվա մեծ մասը գիւղերում էին անցկացնում:

Եթէ այսպէս էր հոգեւոր իշխանութեան կենտրոնը, ինչ կը լինէր միւս անդերում: Վանքերում ապրում էին վայրենացած վարդապետներ, որոնք վաղուց մոռացել էին, թէ իրանք հոգեւորական են, նրանք զբաղված էին տնայնութեամբ, հարստանալու միջոցներ էին որոնում, որպէս զի վայելին իրանց ազգականներին եւ հարձերի հետ, որոնցով լի էին վանքերը: Այդ սեւազուլները վարդապետական զգեստներ էլ չէին հագնում, այլ պնշվում էին հարուստ աշխարհականների ձեռով: Աւելի վատ էին գիւղական քահանաները: Սրանք անուշով

Ահա թէ անմիտ բարեկամներն ինչպիսի արջի ծառայութիւն մատուցին Կիրակոսեան քահանային եւ միանգամայն ոչնչացրին նրա երկարամեայ ծառայութիւնը եւ ձեռք բերած վարկն ու պատիւը: Եթէ իւրաքանչիւր տարի նրա անմիջական իշխանութիւնը իր պարտքը ձանայէր եւ իր ժամանակին հաշիւներն ստուգէր, այդքան փողեր չէին վաճառվի եւ այդքան ծանր կերպով էլ չէր վերաւորվի այժմեան խոսակցութեան առարկայ դարձած Յակովբ քահանայն:

Երէկ այստեղից Ալեքսանդրօպօլ դնայ այնտեղի յաղորդ Մատթէոս վարդապետը, որ հոգեւոր իշխանութեան կարգադրութեամբ եկել էր Կարս եւ մոմավաճառութիւնը անելով Երզնէ վարդապետ Մուրադեանի ձեռքից, յանձնեց Մինաս քահանայ Տէր-Պետրոսեանին ժամանակաւորապէս կառավարելու, մինչեւ այդ բանը կապալով կը տրվի եւ վերջնականապէս կազմաւորվի զանազան անձանց քահանայներին ծառայելու: Լուր է պատու, որ թեմական առաջնորդ Պարզեան արքեպիսկոպոսն էլ արեւելք է գալ կառավարութեան գործերին անձամբ անդակնալու եւ մի քանի հաշիւները քննելու: Երբեք այնքան խճճված են, որ դժուարութեամբ կարելի է միջոց գտնու դար: Սպասում ենք տեսնելու, թէ արեւելք ճիշդ է, որ մեր հոգեւոր իշխանութիւնն էլ արամադրէ է իր ստորադրեալներին զգայնել տալ իրանց պարտքը եւ խստութեամբ պատժել յանցաւորներին, թէ մինչեւ այժմ չնչին կարգադրութիւններն էլ րօպէի ազդեցութեան հետեւանք են եղել...

Հ. Նահապետեան

ՆԱՄԱԿ ԽՍԻՍԿՐՈՒԹԵԱՆ

Շուշի, յունիսի 25-ին
«Մշակի» 112-րդ համարում պ. Կ. Առամանեանը գրում է, որ իբր թէ մենք մի ուսուցչի տակով ենք ունի տարի իր ոտնիկը անցնալ տարվապէս ուսուցչի աշխատքը եւ համարում յայտնել, ու այդ սխալ է: Տիրաւոր վարդապետը առաջի տարին հրաւիրել է նրան 1000 ռուբլի իրեն Լազարեան ձեռնարանի ընթացաւորութիւնը մեզ օնդակացրել: Երբ այս տարի հոկտեմբերին, այսինքն ուսման տարվա սկզբից բաւական անցած նա մեզ յայտնել, որ այժմ 1200 ռուբլի պէտք է վճարենք, մենք բողոքեցինք: Յետոյ պ. Առամանեանը ներկայացրել իր ձեռնարանական վկայականը, որով տեսնուել շարունակեց պահանջել այնպէս վճարելու, ուստի եւ մենք դիմեցինք Նորին Վեհափառութեան եւ հրաման ստացանք չը տալ, բայց երբ պարտքը հրաժարվեց պաշտօնից եւ նոր գլխում եղաւ, կատարեցինք՝ ինչպէս որ կարգադրվեց:

Հոգաբարձու՝ Բ. Ասրիբեկեանց

Միայն եկեղեցու պաշտօնեայ էին, իսկ իրապէս եկեղեցու հետ ոչինչ գործ չուէին: Գահանայ գիւղում աշխատում էր մէլիքի կամ տանուէրի պաշտօն ձեռք բերել, որպէս զի կարողանայ լաւ կեղծել, եկեղեցու գոնքը չէին բացվում, ժամանացութիւն անգամ չէր լինում, որովհետեւ քահանայ երկրպագ էր, արհեստաւոր, մի խօսքով ամեն ինչ, բայց ոչ քահանայ: Կային այնպիսիները, որոնք մահմեդական իշխողների ստորութիւնն էին, չափում էին նրանց սիրտը զանազան մասնութիւններով:

Այսպէս էր եկեղեցական դասը՝ սկսած կաթողիկոսից մինչեւ վերջին գիւղական երեցը: Դա այն դասն է, որի ձեռքում էր գտնվում այն ժամանակ ուսումը, դատարարականութիւնը, ամեն մի մասուր գործ: Եւ հասկանալի է, թէ ինչ կը լինէր այդպիսի հովիւների իշխանութեան մասնավոր ժողովրդի բարոյականութիւնը: Դա ամեն կողմով զրկված ու դժբաղդ մի ժողովուրդ էր: Նրան հարստահարում էին ամենք թափառական գահից մինչեւ եկեղեցական իրարարկային ամենաստորին տնտիւնները: Նրա կենանքը, նրա ստացուածքը հարեւորաբար գիւղացի տէրեր ունէին, իսկ հողին խաւար էր, անապատ: Այդ դրութիւնն էր հասցրել նրան այն անանական բիծութեան, որը մենք տեսնումք Շահ-Աբասի գերեզմանութիւնների ժամանակ:

Բայց հայ ազգի բաղդն էր, որ նրա կենանք ամենամալայ միջոցներում էլ երեւան էին գալիս անհատներ, որոնք ընդհանուր ապակաւորութիւնից բարձր մնալով, վատ էին պահում իրարարկային վերջին կայծերը: Այդ տեսակ եւ իրարարկային գործը չը մնաց Հայաստանը եւ մեր նկարագրած դարձուրդի անկման եւ վայրենացման օրերում: Միւսեանց երկրում, Տաթեւի վանքի մօտ, մի քանի վարդապետ-

ՆԱՄԱԿ ԽՍԻՍԿՐՈՒԹԵԱՆ

Բազու, յունիսի 9-ին
«Մշակ» լրագրի № 113-ի Սալեանից գրած լուրի մէջ մի քանի թիւրիմացութիւններ են սպրդել: Նախ՝ որ ձէվադի դաւ առում այս տարի ոչ թէ մորիս էր երեւացել, ինչպէս ասված է լուրի մէջ, այլ магокезая кобылка (Stauronotus magrocanus—Thunb.): Երկրորդ՝ ինձ ուղարկել էր Բազուի նահանգական վարչութիւնը ձէվադի գաւառը ոչ թէ մորիսի դէմ կուելու համար գործը կազմակերպելու, այլ միայն ցոյց տալու տեղական վարչութեան ներկայացուցիչներին պարզեան փոշի գործածութեան եղանակը:

Լրատուն յայտնում է, որ, իբր թէ, ամեն ինչին չեն պահպանված այն պայմանները, որոնց վրա մասնաւոր է արել երկրագործութեան միջնորդութեան հրատարակած բողոքները: Հնդկականութիւն, փորձը կատարվեց նոյն պայմաններով, որոնք ցոյց են տուած Բօսնիայի բողոքի մէջ: Իսկ փորձերի անաշտուրթեան պատճառը կայանում է նրանում, որ ինձ յանձնված պարզեան փոշին (парикская зелье), ինչպէս երեւաց քիմիական անալիզից, լոպանդակում էր ոչ թէ 50% arsenicum, այլ միայն 22%: Բացի դրանից, այդ փոշիից պատրաստած հեղուկով աղող գործելու համար հարկար է ձոխ բուսականութիւն, որը, ինչպէս յայտնի է, ձէվադի գաւառում գտնւան վերին բուսականութիւնն է:

Սարգիս Բաշինջաղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեզ հաղորդում են, որ հանդուցեալ Յ. Սատիսեանի յիշատակին ժողոված գումարով թողալ հաստատուել ինդիկը անցել է ձեւական պահանջների բոլոր չըլծանքներ եւ ստացել է վերջնական կազմակերպութիւն: Ժողոված գումարը պահվում է արժեթղթերով դանձարանում: Այդ գումարով պէտք է մի որդեգիր պահվի: Թիֆլիսի այդգործական դպրոցում առաջիկայ 1901 թուի յունիսի 1-ից:

Երեքշաբթի, յունիսի 11-ին, Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը հաստատեց ձիաքարչների բեկդիական անանուն ընկերութեան ներկայացուցիչ Բօքիի ներկայացրած նախագիծը: ձիաքարչի մի նոր գծի վերաբերմամբ, որ Միքայէլեան փողոցից, Սազօվայա եւ Կօկալայայ փողոցներով, պէտք է գնալ դէպի վերջնական կալարան: Հէնց այս քաղաքային ընթացքում կը սկսեն բէկար գնել այդ նոր գծի վրա:

Մենք հաղորդեցինք պարսից Շահ Մուղաֆիէ-Էդդիին Պետերբուրգ գալու մասին: Յունիսի 5-ին Շահը ընդունեց մայրաքաղաքի քաղաքային ինքնակառավարութեան ներկայացուցիչներին: Քաղաքապետի Լիւնաիով եւ ձայնաւորների մատուցին մի սկուտեղ աղ ու հացով:

Ներ հիմնեցին մի միաբանական ուխտ: Նրանք խիստ ճշգնաւորական կանոններ սահմանեցին, որոնց մէջ ամենախիստանքն այն էր, որ ամենք պիտի գրեթե զբաղվին: Միաբանութեան անդամները չըլծն քարովիների պաշտօն կատարեցին: Հայաստանի զանազան կողմերում, վերանորոգելին մի քանի վանքեր, բայց ոչ քարովիները եւ սկսեցին մարտնչել տիրող սուրբ թոյակների կարողութիւնը: Միւրիքէթ կաթողիկոսը, ինչպէս վայել էր մի վեղարաւոր խաչիկ, ստատիկ հայաւանքներ հանեց այդ վերանորոգիչ վարդապետներից մի քանիսի դէմ: Բայց նրա ստոր մասնութիւնները գործին չառնէին: Եւ գաղափարով ոգեւորված վարդապետները կարողացան մի հոտանք մտնել նախկինական ներկայում կենանքի մէջ: Նրանք հրաչեցին չը գործեցին եւ չէին էլ կարող գործել: Բայց նրանց գոնէ աշուղեցի գրագիր տութիւնը նորից հաստատել վանքերում: պատրաստվում էին փողեր ի շատէ կարգին հոգեւորականներ, իսկ սա արդէն մի բարեբարութիւն էր խեղճ ժողովրդի համար: Այդ միաբանութեան կարգից էր Մուլեան կաթողիկոսը, որ սկսեց վերաշինել գոմանց դարձած Էթմիսինը եւ յետ գնել Մելիքէթի եւ միւսների վաճառած եկեղեցական սրբութիւններն ու անօթները: Վերջապէս այդ վանականների դպրոցների պետին էր Առաքել Դաւրիթիցի վարդապետը, որի հեղինակած պատմութիւնը գրական մի պայծառ ստուղի փայլերն է ցոյցացնում: XVII դարի բաւարի ու սուգերի մէջ, Պատմելու կարողութիւնը, գիտնականութիւնը, լեզուի կահնաւորութիւնը գեղեցիկ վկայութիւններ են Առաքելի ընդունակութիւնների եւ ստացած կրթութեան մասին:

(Կը շարունակվի)

նութեանը: Խարբերը փրկելուց յետոյ՝ հաւանականաբար կազմավորւն եւ միւս կէտերը Գրեմապետ Միշինսկոյի զօրաբաժնին աջողակեց քաշվել Դաշիցառ կայարանը:

Գրեմապետի հետագիւրը Խարբերովսկից յուրիսի 9-ից, «Բրազիլի» չինական տեղի էր ունենում ցերեկը երբեմն-երբեմն անվտանգ հրացան-նաճգովիին եւ ուղարկուած թիւն, որոնք բոլորովին դադարեցին զիշերը: «Սեւնի» չոգենաւը չըջուած էր Այգուտի մօտ, աշակերտով Զադէ-յան զօրաբաժնին: Տեղ-տեղ կողակները անց-նում են Ամուրը եւ հարածում չինացիներին պահակախմբերը: Խարբերից Լախուստու եկած չոգենաւից հետագիւրում են, որ չինացիները կրակ էին բացել այդ չոգենաւի վրա Սանսի-նում ափից ու երեքվայման նաւերից: Վերա-ւարած են նաւաւարը եւ մի կին: Սանսիին ուս բնակիչները զստվում են բնական կրակ-ւում, Սոււնգարիի մէջ շտեղծում:

10-րդ Դժ: Պաշտօնական հետագիւր կապաւոր-ւոյց, յուլիսի 10-ից, Վրոնչուտաբաժնում տեղեկու-թիւն չէ ստացված Գէնտէրից: Գնդապետ Բե-լով գեկուցանում է Հոննիստաբաժնից, յուլի-սի 10-ից, թէ բոլորները զօրաբաժնից Սեր-ֆոնտէնից դէպի հարաւ կարեցին անցան եր-կաթուղու գծի վրայով, որ այժմ ազատ է բոլորների, որոնք դնում են դէպի Բնոստէրի եւ վաղիկ խառնվելու կէտը: 100 հայկէնդէ-րների գերմուր տեղի ունեցաւ Վինգուի մօտ: Երկաթուղու գիծը ստատիկ վնասված է, բայց շուտով կարգի կը բերվի:

10-րդ Դժ: Տեղեկութիւն անգլիական հիւպատո-սը հաղորդում է յուլիսի 8-ից. «Այսօր Մակ-դոնալդից նամակ ստացվեց, վրան զրկած «Պե-կին, 21 յունիսի», որով օգնութիւն է խնդրում: Պաշարը կը բաւականանայ երկու շաբաթվայ ընթացքում, բայց բերգապահ զօրքը չէ կարող երկար դիմանալ եւսագործն յարձակումների: Մեր կողմից սպանված են 44 հոգի եւ վերա-ւարված երկու անգամ աւելի:

10-րդ Դժ: Այստեղ, պաշտօնական չըջանե-րում յոյս է ծագում, թէ զեպանները կեն-դանի են:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Շէն հետագիւր է այստեղի չինական զեպանին, թէ օտարազգի զեպան-ները պահպան զինուորների ուղեկցութեամբ ուղարկվում են Տեանձին: Չինական կառավա-րութիւնը ոչ միայն պաշտպանում էր նրանց, այլ եւ հայթայթում էր նրանց ուսուցիչ-ներ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մակ-Կինլէյի պատասխանը չինական կայսրին պարունակում է հետեւեալ պայմանները. 1) հրապարակաբար յայտնել, թէ արդեօք կենդանի են զեպանները եւ ինչ զրուծեան մէջ են գտնվում: 2) անյապաղ հնա-րաւորութիւն տալ զեպաններին ազատորէն հաղորդակցութիւն ունենալու իրանց կառա-վարութիւններին եւս եւ հետագին նրանց կենսութիւնը եւ ազատութեանը սպառնացող վը-տանգը: 3) թոյլ տալ չինական իշխանութիւն-ներին յարաբերութիւններ ունենալ ազատա-րար զօրքերի հետ՝ օտարազգիներին միայն պաշտպանելու եւ կարգը վերականգնելու հա-մար: Եթէ պայմանները կատարվեն՝ Մակ-Կին-լէյ կենդանի է, որ ոչ մի արգելք չի լինի ինչպէս զրուծութեամբ լուծելու այն հարցերը, որոնք ծագել են վերջին անկարգութիւնների պատճա-ռով եւ նախագահը, պետութիւնների համա-ձայնութեամբ, հաճութեամբ կը դնէ իրան չի-նական կայսրի տրամադրութեան տակ:

ՊԱՐԻԶ: Դէլիասէ ստացաւ Շանգայի ընդ-հանուր հիւպատոսից հետագիւր յուլիսի 10-ից, «Լի-նուդ-Չանգ» հաւատարմից ինձ, թէ Պիչն կենդանի է եւ համաձայնեց հասցնել նրան ինձ-նից հետագիւր, որի պատասխանը կը պահանջէ հինգ օրվայ ընթացքում:

Դէլիասէ ստացաւ հետեւեալ հետագիւրը Տեանձինի ֆրանսիական հիւպատոսից. «Քա-ղաքը հանդարտ է եւ յուլիսի 4-ին ստացաւ իր սովորական տեսքը: Յուլիսի 4-ին Պեկին ուղարկված սուրհանդակը կարող է յետ գալ եօթ օրից յետոյ»:

ՄՕՍԿՎԱ: Գիւթեան քոյրերի «УТОДИ МОЯ печали» համայնքը սանիտարական խումբ է ու-ղարկում Հեռուոր Արեւելք աւելի քան 100 գիւթեան քոյրերով: Խմբին իրեն առաջնորդ, գնում է համայնքի կառավարիչ իշխանուհի Շախովսկայա:

Խմբագիր՝ ԱԼԷԲԱՆԻՐ ԳԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻԻՔ-ԱԼԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱՐՈՒՂԻ (Ժամերը Պետերբուրգի հաշուով) տարբերութիւնը 58 րոպէ:

№ 5 գնացքը:		№ 3 գնացքը:	
Բազուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.	Բազուից դուրս է գալիս ցեր. 4 ժ. 1 ր.	գիշ. 11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »	Թիֆլիս է հասնում առ. 8 » 53 »	եր. 5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս » 9 » 32 »	եր. 6 » 34 »	Թիֆլիսից դուրս է գալիս » 9 » 32 »	եր. 6 » 34 »
Բաթում է հասնում եր. 9 » 1 »	առ. 7 » 24 »	Բաթում է հասնում եր. 9 » 1 »	առ. 7 » 24 »
№ 6 գնացքը:		№ 4 գնացքը:	
Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.	Բաթումից դուրս է գալիս առ. 7 ժ. 50 ր.	եր. 7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »	Թիֆլիս է հասնում եր. 7 » 15 »	առ. 8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս » 7 » 18 »	» 10 » 05 »	Թիֆլիսից դուրս է գալիս » 7 » 18 »	» 10 » 05 »
Բազու է հասնում ցեր. 12 » 10 »	» 5 » 16 »	Բազու է հասնում ցեր. 12 » 10 »	» 5 » 16 »
առագ գնացք:			
Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.	եր. 9 » 41 »	Թիֆլիսից դուրս է գալիս ցեր. 11 ժ. 19 ր.	եր. 9 » 41 »
Բաթում է հասնում առ. 7 » 15 »	» 10 » 05 »	Բաթում է հասնում առ. 7 » 15 »	» 10 » 05 »
Թիֆլիսից դուրս է գալիս » 7 » 18 »	» 10 » 05 »	Թիֆլիսից դուրս է գալիս » 7 » 18 »	» 10 » 05 »
Բաթում է հասնում առ. 7 » 15 »	» 10 » 05 »	Բաթում է հասնում առ. 7 » 15 »	» 10 » 05 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՄՆԵՒԱՆՈՅ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ (Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ) ա մ ե ո ռ , բ ա ց ի կ ի ռ ա կ ի օ ռ ե ռ ի ց : Ա Ռ Ո Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վրաբաժնե-թեան, վեներական (թիֆլիս) և միջառու հիւանդ. Կ. Մ. Ձիվովանի—9—10 ժ. աչքի, ներքին և ներքին Բ. Պ. Պրոսաւիլի—12—1 ժ. սկանչի, քթի, կ-կոր դի եւ կրծքի Զ. Բ. Բարանասեանց—11—12 ժ. կանանց և երե-կայոց հիւանդ. Ա. Պ. Կարապետեանց—1—1/2 ժ. ներքին և երե-կայոց Բ. Պ. Պրոսաւիլի—6—7 ժ. Բ. Ա. Նաւասարդեան—7 1/2—8 ժ. Վճար 50 կ. քաղաքները ձրի համախորհրդի (կոն-սիլումի) և օպերացիայի համար առանձին: Օ. Տ. Ասլանխանի—տանը, ծաղկահատ և բժշ-կական մարմնամարդ. զիւնը 11—1 ժ.: Հիւանդանոցի վերանորոգ. Բժօկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Հ Ի Ո Ւ Է Ր Համաձայն առաջագրութեան նորին բարձր սրբազնութեան տէր թեմակալ առաջնորդի հա-յոյ Վրաստանի եւ Իմէրէթի, 17-ին յունիսի տարուայ թ. 235, առաջիկայ սեպտեմբեր առ-մին լինելու է Թիֆլիսի երեքսեան հայոց հո-գեւոր զարդի հոգաբարձութեան ընտրութիւն, ուստի յարգաբար խնդրում եմ քաղաքի ա-ռաջին մասի հայոց եկեղեցիների բարեպաշտ այն ծխականներին, որոնց տարիքը 25-ից անց է, բայց զուցէ մոտաջմամբ նրանց անունները դեռ գրված չեն ծիող անուանացուցակում, որ շտապին նրանք մինչեւ առաջիկայ օգոստոսի մէկը եւ ցուցակագրվին անշուշտ, որպէս զի ի-րաւունք ունենան մասնակցութիւն վերոյիշեալ ընտրութեանը: Որչեալ ժամանակից յետոյ ընտրութեանը մասնակցելու իրաւունքից:

Գործակալ ա. մ. Թիֆլիսի՝ Զաքարիա քահ. Զարեհեղեան Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ

ՍՍՄՈՒԼԻ ԶԱՉՊՐՈՆԵՆԵՐ ամառու հիւանդների ընդունում է Բոր-ժովում. Анастасіевская, дача Хита-рова. 8—10

ՏԵԼԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ „Մ Ի Զ Ն Ո Ր Գ“ (Посредник)

Գ. Ի. ԵԱԿԻՄՕՎԻՉԻ Պուշկինեան պատմ, Թամաշիկի քարապան-սարայի հանդէպ: Կատարում է զանազան յանձնարարութիւն-ներ անշարժ կաշքեր ծախելու եւ գրաւ դնելու: Պահանջվում է առաջին եւ երկրորդ գրաւակա-նով փող: Մանրամասնութիւնների համար խնդրեմ դիմել գրասենեակը: № 3. 0—37

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Շուտով լոյս կը տեսնի Ախալքալաքի աղէտը մի քանի պատկերներով, Ախալքալաքի աւե-րումը 23 ֆոտոսով պատկերներով, երկարու-թիւնը 24 վերջով, լայնութիւնը 16 վերջով: Պատկերները վերնագիրները լինելու են երեք լեզուով—ռուսերէն, ֆրանսերէն, հայերէն: Խնդրում ենք պարտնելու օգնութիւն հաւ-ցնել տպագրութեան ծախսերին: Այն բաժա-նորդները, որոնք 5—10 օրինակ կը գրուեն, կատանան նուէր մէկ օրինակ գիրք եւ մէկ օրինակ պատկերից: Ընդունվում է բաժանորդագրութիւն մինչեւ լոյս տեսնելը 1 րուրի ճանապարհամատով-գիրքը եւ պատկերը լոյս տեսնելուց յետոյ կարծե-նան 2 ր.: Հասցեն՝ Тифлисъ А. Авакѳвъ. 3—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-іe

ՅՐԱՆՍՊՈՐՏԱՆ ԵՒԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ Ե ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ: Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլս: Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 19 յուլիսի (1 օգոստ.) ՄԻՆԳՐԷԼԻ չոգենաւը, նաւապետ Շիլթ: Եւ այս-պէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով: Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտաղիզի մէջ, ընդու-նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար: Ապրանքներ եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա-մար թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակալատարներին: ԲԱԹՈՒՄԻՄ—պ. Վիկտոր ԴԱՆՏԻՆ, Նարբէժնայա: ԹԻՖԼԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարե-կենդանեանին, Սիմոն փող: Սոֆիաբարոյնայի եւ Մայսուրաձէի քարապետաբար: ԲԱԳՈՒԼ—Էդր. Վ. եւ Ի. Մուլիսիսեաններին, Նարբէժնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՐՕՒ ՍԻՅԱԿ—Վաղիկաւազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. չ. 7—20

ՆԻԿՈՂՍՅՈՍ ԱՐԱՋԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի անտրակտն և գործարանական հաշուապահութեան ՈՒՍՈՒՅԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ներկու սերի անձանց՝ 4 ժամայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-բաշխարհերով, և եղած դէպքերում լսնան և առնում պաշտօնի առաջարկել: ՊԱՐԱՊՄՈՒՅԻ ԱՌԱՎԿԱՆԵՐՆ ԵՆ Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենամի առեւտրական ձևերի, հաւ-յիւրձ նաւթային արդիւնաբերական և կերտիսի գործարանական հաշուետեսութեան: Բ) Առեւտրական խաղականութիւն: Գ) Առեւտրական նամակագրութիւն: Դ) Կեղագրութիւն և ամենապատ ձեւերի ուղղելը: Պարապոմոնքներ սկսվելու են 1900 թ.ի սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 2000 ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապոմոնքներ: Ցանկացողներ թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյան, Ն Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիևսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20: Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՄ, Տեղեկակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառարաններում: Գինն է 3 ր. 50 կոպէկ: Օտա-րաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել Տեղեկակին, առանց պատի ծախս վճարելու: 7—30

ԳՐԵՆԱԴԵՐՆԵՐԻ ԳՐՈՒԶԻՆՍԿԻ

Յ Ա Ն Ո Ւ Ն Գ Ե Ն Ե Ր Ա Լ Կ Օ Տ Լ Ե Ա Ր Ե Վ Ս Կ Ո Ւ Գ Ո Ւ Ն Դ Ը,

որը գտնվում է Թիֆլիսի նաւանգի եւ գաւառի Բէլի-Վիլիս աւանում, ի նկատի առնելով մա-յիսի 5-ին, յունիսի 1-ին եւ յուլիսի 1-ին չը կայացած աճուրդները, նորից հրաւիրում է ցան-կացողներին յանձն առնել գնելու եւ նրա բոլոր առտիճանաւորների համար կարեւոր կենսական պիտույքներ եւ ըմպելիք մատակարարումը: Այսպէս 1900 թ.ի սեպտեմբերի 1-ից մինչեւ 1901 թ.ի սեպտեմբերի 1-ը: Այդ մատակարարման աճուրդը կը լինի բերանացի, վերջնական, առանց կրկնաձեռքի, այս յուլիս ամսի 28-ին, ցերեկվայ 12 ժամին Թիֆլիսի 16-րդ միջոցէին գրե-նադիրների գնդի գիւնատանը, որ գտնվում է Հալաբարի մօտ տեղաւորված բանակում: Կա-պալի պայմանները կարելի է տեսնել ամեն օր, բայցի սօն օրերից, առաւօտեան 9 ժամից մին-չեւ ցերեկվայ 12 ժամը, ինչպէս Գրուզինսկի գնդի գիւնատանը: Բելի-Վիլիսում, այնպէս էլ Միջոցէին գնդի գիւնատանը Թիֆլիսում: Աճուրդի սկսվումը՝ նրան մասնակցել ցանկացող-ները պէտք է 3000 ր. գումարի գրաւական ներկայացնեն: 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ


Վարչութիւնը պատիւ ունի յայտնել հետեւեալ: Ա. Պողոսեան նուիրել է ընկերութեան ան-ձեռնմխելի 5000 րուբլի գումար, որի տոկոսով (մօտ 500 ր) երկու տարին մի անգամ պէտք է արվի մրցանակ հայոց նոր (17-երորդ դարից սկսած) գրականութեան և պատմու-թեան վերաբերեալ լաւագոյն աշխատութիւնների համար: Մրցանակին մասնակցել ցանկա-ցողները պէտք է ներկայացնեն իրանց աշխատութիւնները մինչեւ 1901 թ.ականի յունիսի 1-ը: Աշխատութիւնները ներկայացվում են առանց հեղինակների անունների. այս անունները ներկայացվում են առանձին ծրարներով, որոնց վրա գրվում է նոյն նշանաբանը, ինչ որ աշ-խատութեան վրա: Մրցանակի արժանացած ձեռագրի հրատարակութիւնը կատարվում է ըն-կերութեան հաշուով: Մրցանակաբաշխութեան իրաւունքը պատկանում է ընկերութեան խմբա-գրական մասնաժողովին, որը իր կողմից ձեռագրի քննութիւնը կարող է յանձնել եւ կողմնա-կի ձեռնհաս անձանց: Մրարները եւ աշխատութիւնները ուղարկվելու են ընկերութեան գրե-սենեակի հասցեով եւ նրանց վրա պէտք է նշանակված լինի Ա. Պողոսեանի մրցանակի համար: Ընկերութեան գրասենեակի հասցեն. Лорисъ-Меликовская ул. Тифлисское Общество 6—6 Изданія Армянскихъ Книгъ.

ՅԵՐԱՐԱՐԱՆ-ՑԵՆԻԿԱՆ ԲԻՐՈ Ինժեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116. Հասցէն հեռագիրների համար. Тифлис—Пассеку. ՏԵԼԵՖՈՆ № 642.

ՎԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱԿԱՑՈՒՄԸ

ԴՆՆԵԼ, ԺՈՂՈՎԱԼ և ՍԱՐԲԵԼ ա մ ե ն տ ե ս ա կ տի բրիններ, խողովակներ, մեքենա-ներ և ջրհաններ: Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ ե Ր Կ ա թ է Կ ա մ ա լ ր ջ ն ե լ և տնակներ: ՑԵՄԵՆՏ ԿԱՃԱՌՈՒՄ (ե. չ. 2.)




ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑՈՒԹԻՒՆ Ռուսաց և արտասահմանեան ֆիր-մաների:

ԲԻՐՈՆ ՑԱՆՁԷ Ե ԱՌՆՈՒՄ կառուցանել

Ամեն տեսակ շինութիւններ, գոր-ծարաններ և գործատներ ԳԱԶԱՇՈՒԹԻ-ՋՐԱՆՑՔՆԵՐ

Ամեն տեսակ էլէկտրօտէխնիկական կառուցումներ և սարքեր, այսինքն հեռագիրների, տէլէֆօնների, լու-սաւորութեան, տրամվայների և ոյ-ժի հաղորդիչ հեռաւորութեան վրա:



ՅԵՐԱՐԱՐԱՆ-ՑԵՆԻԿԱՆ ԲԻՐՈ Ինժեներ Ն. Բ. Պասսեկի

Тифлисъ, Михайловская ул. № 116. Հասցէն հեռագիրների համար. Тифлис—Пассеку. ՏԵԼԵՖՈՆ № 642.

ՎԱՆԱԼԻԶԱՑԻԱ, ՎԵՆՏԻԼԱՑԻԱ և ՏԱԿԱՑՈՒՄԸ

ԴՆՆԵԼ, ԺՈՂՈՎԱԼ և ՍԱՐԲԵԼ ա մ ե ն տ ե ս ա կ տի բրիններ, խողովակներ, մեքենա-ներ և ջրհաններ:

Կ Ա Ռ Ո Ւ Ց Ա Ն Ե Լ ե Ր Կ ա թ է Կ ա մ ա լ ր ջ ն ե լ և տնակներ:

ՑԵՄԵՆՏ ԿԱՃԱՌՈՒՄ (ե. չ. 2.)